Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Դիմիտրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (22 դասաժամ), ինֆորմատիկա (14 դասաժամ, ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարանների համար), մաթեմատիկա (5 դասաժամ տարրական դասարաններում), ռուսաց լեզու (8 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ), դասվար (20 դասաժամ, ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարանների համար, ռուսերենի գերազանց իմացությամբ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազարույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),

մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. դեկտեմբերի 6-ից մինչեւ 2023թ. դեկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2023թ. դեկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Դիմիտրով, Մայակովսկու 43/1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 84-74-01 հեռախոսահամարով: